A.2.3. Պացիենտի ուղեցույց

Պացիենտի ուղեցույց

Վալպրոատ* . Հակաբեղմնավորիչների կիրառում և հղիություն. Ինչ է պետք իմանալ

Պացիենտի ուղեցույց

Այս ուղեցույցը նախատեսված է Ձեր կամ Ձեր խնամակալի (օրինական ներկայացուցչի) համար, եթե աղջիկ եք կամ վերարտադրական տարիքի կին և ստանում եք վալպրոատ պարունակող դեղ:

Այն հաղիսանում է վալպրոատի կիրառման ժամանակ հղիության կանխման ծրագրի շրջանակներում իրականացվող ռիսկերը նվազեցման միջոցառումների մի մաս, և որի նպատակն է նվազեցնել դեղի ազդեցությունը հղիության վրա վալպրոատի կիրառման ժամանակ:

Ներկա ուղեցույցը կարևոր տեղեկություն է պարունակում հղիության ժամանակ վալպրոատի կիրառման ռիսկի մասին:

Ներկա ուղեցույցը նախատեսված է աղջիկների և վերարտադրողական տարիքի կանանց կամ նրանց խնամակալների / օրինական ներկայացուցիչների համար, ովքեր ընդունում են վալպրոատ* պարունակող դեղ:

- Բուկլետը հղիության ժամանակ վալպրոատի կիրառման ռիսկերի մասին կարևոր տեղեկություններ է պարունակում:
- Այն ընթերցելը կարևոր է, եթե բժիշկը վալպրոատ է նշանակել՝ որպես Ձեզ համար լավագույն բուժում:
- Հղիության շրջանում վալպրոատի կիրառման ռիսկերը նույնն են բոլոր աղջիկների և կանանց համար, ովքեր վալպրոատ են ընդունում:

Կարդացե՛ք բուկլետը կիրառման հրահանգի հետ միասին, որը տեղադրված է դեղի տուփի մեջ:

- Կիրառման հրահանգը կարևոր է ընթերցել եթե անգամ նոր չեք սկսել վալպրոատ ընդունել:
- Ընթերցելը կարևոն է, քանի որ կիրառման հրահանգը պարունակում է Ձեր դեղի մասին վերջին տեղեկությունները:

Հնարավոր է Ձեզ համար օգտակար լինի այս բուկլետի մասին խոսելը Ձեր զուգընկերոջ, բարեկամների, ընտանիքի անդամների հետ:

- Ցանկացած հարցի դեպքում դիմե՛ք Ձեզ բուժող բժշկին:

Պահե՛ք բուկլետը: Գուցե անհրաժեշտ լինի այն վերընթերցել:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. Կարևոր տեղեկատվություն , որն անհրաժեշտ է հիշել

2. Հակաբեղմնավորիչ միջոցներ դեռահաս աղջիկների և վերարտադրողական տարիքի կանանց

համար

3. Ինչպիսին են հղիության ժամանակ վալպրոատի կիրառման ռիսկերը:

4. Զարգացման բնածին արատներ

5. Զարգացման և ուսուցման խնդիրներ

6. Սա ի՞նչ է նշանակում ինձ համար.
   - Ես սկսում եմ վալպրոատով բուժում:
   - Ես ընդունում եմ վալպրոատ և չեմ պլանավորում ընտանիք կազմել:
   - Ես ընդունում եմ վալպրոատ և նախատեսում եմ ընտանիք կազմել:
   - Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ:

1. ԿԱՐԵՎՈՐ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ, ՈՐՆ ԱՆՀՐԺԵՇՏ Է ՀԻՇԵԼ

- Վալպրոատը էպիլեպսիայի և երկբևեռ խանգարումների բուժման արդյունավետ դեղ է:
- Վալպրոատը կանանց և աղջիկների շրջանում կիրառվում է բացառապես այն դեպքում, երբ բոլոր մնացած միջոցները անարդյունավետ են, քանի որ վալպրոատի կիրառումը հղիության ժամանակ կարող է լուրջ վնաս հասցնել ապագա երեխային: Անկախ հիվանդության զարգացման ընթացքից մի՛ ընդհատեք վալպրոատ ընդունելը՝ առանց բժշկի ցուցման:

- Վալպրոատով բուժման ժամանակ միշտ օգտվեք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներից.
    - Կիրառեք հակաբեղմնավորիչներրը վալպրոատով բուժման ողջ ժամանակահատվածում,
    - Ինքնակամ մի՛ ընդհատեք հակաբեղմնավորիչ միջոցների կիրառումը ամբողջ բուժման ընքացում:Ձեր բժիշկը խորհուրդ կտա արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ, որպեսզի խուսափեք չնախատեսված հղիությունից:

- Անհապաղ նշանակեք հանդիպում բուժող բժշկի հետ, եթե կասկածում եք, որ հղիացել եք:
- Անհապաղ դիմեք բժշկի խորհրդատվության, եթե պլանավորում եք հղիանալ և մի՛ ընդհատեք հակաբեղմնավորիչների կիրառումը առանց բժշկի հետ խորհրդակցելու:
- Մի՛ ընդհատեք վալպրոատով բուժումը, առանց բժշկի ցուցման, քանի որ կարող է հիվանդության վատթարացում դիտվի:
- Հիշե՛ք, որ պարբերաբար, նվազագույնը տարեկան մեկ անգամ, պետք է դիմեք բժշկի:
- Նշված այցի ժամանակ քննարկեք Ձեզ բուժող բժիշկի հետ և ստորագրեք ռիսկերի ճանաչման ձևաթուղթը՝ համոզվելու համար, որ տեղակացված եք և գիտակցում եք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերը:

2. ՀԱԿԱԲԵՂՄՆԱՎՈՐԻՉՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԴԵՌԱՀԱՍ ԱՂՋԻԿՆԵՐԻ և ՎԵՐԱՐՏԱԴՐՈՂԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԿԱՆԱՆՑ ՀԱՄԱՐ, ՈՐՈՆՔ ԿԱՐՈՂ ԵՆ ՀՂԻԱՆԱԼ

Ինչո՞ւ են ինձ անհրաժեշտ հակաբեղմնավորիչները:
Վալպրոատով բուժման ժամանակ միշտ կիրառե՛ք հակաբեղմնավորիչ միջոցներ.
- Հակաբեղմնավորիչ միջոցները կիրառե՛ք վալպրոատով բուժման ողջ ընթացքում:ծ:
- Մի՛ ընդհատեք հակաբեղմնավորիչների ընդունումըամբողջ բուժման ընթացքում: Ձեր բժիշկը կարող է Ձեզ խորհուրդ տալ արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոց: Դա անհրաժեշտ է ք չնախատեսված հղիությունից խուսափելու համար:

Ինչպիսի՞ հակաբեղմնավորիչ միջոց ես պետք է կիրառեմ:

Խնդրում ենք, քննարկե՛ք Ձեր բուժող բժշկի հետ Ձեզ համար ամենալավ հակաբեղմնավորիչ միջոցը:

Լիարժեք խորհրդակցության համար, խնդրում ենք, դիմեք Ձեր բուժող բժշկին, գինեկոլոգին կամ մանկաբարձին:

3. ՈՐՈՆՔ ԵՆ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ ՎԱԼՊՐՈԱՏԻ ԿԻՐԱՌՄԱՆ ՌԻՍԿԵՐԸ:

Ռիսկերը ապագա երեխաների համար
Հղիության ժամանակ վալպրոատի կիրառումը կարող է լուրջ վնաս հասցնել ապագա երեխային:

- Էպիլեսպիայի և երկբևեռ խանգարումների բուժման այլ դեղամիջոցների համեմատ վալպրոատ ընդունելու դեպքում ռիսկերը առավել բարձր են:

- Ռիսկերը առկա են վալպրոատի նաև փոքր դեղաչափերի կիրառման ժամանակ , որքան մեծ է դեղաչափը, այնքան մեծ է ռիսկը:

Ի՞նչ վնասակարության է ենթարկվում իմ երեխան
Հղիության ժամանակ վալպրոատի կիրառումը երեխային կարող է վնասել երկու ճանապարհով.
- Բնածին արատներով երեխայի ծնունդ,
- Զարգացման և ուսուցման խնդիրներ՝ երեխայի զարգացման ընթացքում:

4. ԲՆԱԾԻՆ ԱՐԱՏՆԵՐ
Հղիության ժամանակ վալպրոատի կիրառումը կարող է լուրջ բնածին արատների առաջացման պատճառ դառնալ.

Ընդհանուր պոպուլյացիայում կանանց շրջանում.
- յուրաքանչյուր 100 երեխայից 2-3 երեխա ծնվում է բնածին արատով:

Այն կանանց շրջանում, ովքեր հղիության ընացքում վալպրոատ են ընդունում.
- յուրաքանչյուր 100 երեխայից մոտավորապես 10 երեխա ծնվում է բնածին արատով:

Ինչպիսի՞ բնածին արատներ կարող են զարգանալ.
- Spina bifida – երբ համապատասխանաբար չեն զարգանում ողնաշարի ոսկորները,
- Դեմքի և գանգի արատներ - այդ թվում շրթունքի (վերին ծնոտի), կարծր քիմքի ճեղք
- Վերջույթների, սրտի, երիկամների, միզուղիների և սեռական օրգանների զարգացման արատներ:

5. ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՈՒՍՈՒՑՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐ
Հղիության ժամանակ վալպրոատի կիրառումը կարող է ազդեցություն ունենալ երեխայի զարգացման և ուսուցման գործընթացի վրա:

Կանանց շրջանում, ովքեր հղիության շրջանում վալպրոատ են ընդունում.
- Յուրաքանչյուր 100 երեխայից 30-40 երեխա կարող է զարգացման խնդիրներ ունենալ:

Երկարաժամկետ արդյունքներ չեն գրանցվել:
Կարող են դրսևորվել զարգացման հետևյալ խանգարումները.
- երեխան ուշ է սկսում քայլել ու խոսել,
- ավելի ցածր ինտելեկտի գործակից, քան իր հասակակից երեխաների մոտ,
- խոսքի զարգացման և լեզվի ցածր տվյալներ,
- հիշողության խնդիրներ:

Երեխաների շրջանում, որոնց մայրերը հղիության ժամանակ ընդունել են վալպրոատ, գոյություն ունի աուտիզմի կամ աուտիստական սպեկտրի այլ խանգարումների զարգացման ավելի մեծ հավանականություն:
Երեխաների մոտ կարող են դրսևորվել ուշադրության պակասի և հիպերակտիվության խանգարման սինդրոմի (ADHD) նշաններ:

6. Ի՞ՆՉ Է ՆՇԱՆԱԿՈՒՄ ՍԱ ԻՆՁ ՀԱՄԱՐ.

Խնդրում ենք, ստորև տրված իրավիճակներին ծանոթացեք և ընտրեք այն իրավիճակը, որը Ձեզ է վերաբերվում.
- Ես սկսել եմ վալպրոատով բուժում:
- Ես ընդունում եմ վալպրոատ և ՉԵՄ պլանավորում ընտանիք կազմել:
- Ես ընդունում եմ վալպրոատ և նախատեսում եմ ընտանիք կազմել:
- Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ:

Ես սկսել եմ վալպրոատով բուժում:

Ձեզ բուժող բժիշկը կբացատրի, թե ինչու է կարծում, որ վալպրոատը Ձեզ համար համապատասխան բուժման միջոց է, և Ձեզ կներկայացնի բոլոր հայտնի ռիսկերը.

-
- **Եթե Դուք չափազանց փոքր եք հղիանալու համար.**
  -Ձեր բուժող բժիշկը վալպրոատ միայն այն դեպքում է նշանակում, եթե բոլոր մնացած բուժման միջոցները անարդյունավետ են Ձեզ համար,
  -կարևոր է, որ Դուք և Ձեր ծնողը/խնամակալը իմանաք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերի մասին: Հետևաբար գիտեք , թե ինչ կանեք, երբ բավական մեծ եք երեխա ունենալու համար,
  - վալպրոատի կիրառման ժամանակ առաջին դաշտանի սկսվելու դեպքում Դուք կամ Ձեր ծնողը պետք է դիմեք մասնագետի:

- **Եթե բավականաչափ մեծ եք և կարող եք հղիան.**

բժիշկը վալպրոատով բուժումը պետք է նշանակի միայն այն դեպքում, եթե Դուք հղի չեք և ընդունում եք արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցներ,

- վալպրոատով բուժում սկսելուց առաջ կամ հետո, ըստ անհրաժեշտության, բժիշկը Ձեզ կխնդրի կատարել հղիության թեստ: Դա անհրաժեշտ է հղիությունը բացառելու համար:
- միշտ օգտագործեք արդյունավետ հակաբեղմնավորիչներ ՝ վալպրոատ ընդունելու ժամանակ.
- վալպրոատով բուժման ամբողջ ընթացքում պարտադիր է արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոցների կիրառումը,
- չընդհատեք հակաբեղմնավորիչների ընդունումը ամբողջ բուժման ընացքում

Ձեր բժիշկը Ձեզ խորհուրդ կտա Ձեզ համար արդյունավետ հակաբեղմնավորիչ միջոց՝ չնախատեսած հղիությունից խուսափելու համար: Դա անհրաժեշտ է, որպեսզի հավաստիանաք, որ հղի չեք:

- բուժման ընթացքը վերանայելու համար Դուք պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ) պետք է այցելեք Ձեր բուժող բժշկին,
- Առաջին այցելության ժամանակ բուժող բժշկրկխնդրի որ, ընթերցեք և ստորագրեք ռիսկերի ընդունման ձևաթուղթը, ինչը կհավաստի, որ Դուք լավ գիտեք և հասկանում եք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերը

- **Եթե Դուք որոշել եք ընտանիք կազմել, խոսեք այդ մասին Ձեր բուժող բժշկի հետ որքան հնարավոր է շուտ:**

- Մի՛ ընդհատեք վալպրոատի ընդունումը կամ հակաբեղմնավորիչների կիրառումը՝ առանց բժշկի հետ խորհրդակցելու,
- Դուք պետք է քննարկեք բժշկի հետ Ձեր երեխայի առողջության հետ կապված ռիսկերի մասին՝ Ձեր հիվանդությունը վերահսկելուն զուգահեռ,
- Դուք և Ձեր բուժող բժիշկը պետք է համաձայնության գաք, թե ինչպես պետք է շարունակեք բուժումը՝ հղիություն պլանավորելուց առաջ:

Ես բուժվում եմ վալպրոատով և չեմ պլանավորում ընտանիք կազմել:

Այն դեպքում, եթե բուժվում եք վալպրոատով և չեք պլանավորում հղիանալ, անընդմեջ պետք է կիրառեք արդյունավետ հակաբեղմնավորիչներ:

- Հակաբեղմնավորիչ միջոցներ կիրառեք վալպրոատով բուժման ողջ ընթացքում:
- Ինքնակամ մի՛ ընդհատեք հակաբեղմնավորիչների ընդունումը ամբողջ բուժման ընթացքում:

Խորհրդակցեք Ձեզ բուժող բժշկի կամ գինեկոլոգի / մանկաբարձի / ընտանիքի պլանավորման կենտրոնի մասնագետի հետ հակաբեղմնավորիչ միջոցների վերաբերյալ:

Դիմե՛ք բժշկի, եթե հղիության կասկածներ ունեք:

Մի՛ ընդհատեք վալպրոատի ընդունումը առանց բժշկի հետ խորհրդակցելու եթե հղիացել եք, քանի որ դա կարող է վտանգավոր լինել Ձեզ և Ձեր երեխայի համար:
Պարբերաբար (նվազագույնը տարեկան մեկ անգամ) Ձեզ անհրաժեշտ կլինի բուժող բժշկի հետ գնահատել Ձեր բուժման ընթացքը:
Տարեկան այցելության ժամանակ բուժող բժիշկը կխնդրի կարդալ և ստորագրել ռիսկերի ճանաչման ձևաթուղթը: Դա հավաստիացնում է, որ Դուք լավ գիտեք և հասկանում եք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերը և գիտակցում եք հղիության կանխմանը վերաբերվող խորհուրդները :

<u>Ես ընդունում եմ վալպրոատ և նախատեսում եմ ընտանիք կազմել:</u>

Եթե ընդունում եք վալպրոատ և պլանավորում եք հղիանալ, դիմեք բժշկին խորհրդակցության համար, սակայն.

- **շարունակեք ընդունել վալպրոատ,**
- **շարունակեք ընդունել հակաբեղմնավորիչներ ՝ մինչև բժշկին այցելելը**:

Կարևոր է, որ չհղիանաք մինչ բժշկի հետ հարցերի քննարկումը:

- Ձեր բժիշկը կարող է փոխել բուժումը նախքան հղիանալը. նշված միջոցը պարտադիր է, որպեսզի Ձեր հիվանդությունը վերահսկվի:
- Դուք պետք է խոսեք այն մասին, թե ինչ միջոցներ է հնարավոր ձեռք առնել Ձեր երեխայի առողջության հետ կապված ռիսկերը նվազեցնելու համար՝ Ձեր հիվանդությունը վերահսկելուն զուգահեռ:
- Ֆոլաթթվի ընդունման հետ կապված խորհրդակցության համար դիմեք բժշկին,եթե պլանավորում եք հղիանալ: Ֆոլաթթուն կարող է նվազեցնել spina bifida-ի և վաղ աբորտի ընդհանուր ռիսկերը, որոնք բոլոր հղիությունների ժամանակ առկա են: Չնայած սրան, քիչ սպասելի է, որ այն կնվազեցնի վալպրոատի ընդունման հետ կապված բնածին արատների զարգացման ռիսկերը:

Պարբերաբար (առնվազն տարեկան մեկ անգամ) պետք է Ձեր բուժման ընթացքը գնահատեք բուժող բժշկի հետ:

Այցելության ընթացքում բուժող բժիշկը կխնդրի Ձեզ կարդալ և ստորագրել ռիսկերի ճանաչման ձևաթուղթը, նշված միջոցառումը հավաստիացնում է, որ Դուք լավ գիտեք և հասկանում եք հղիության ժամանակ վալպրոատի կիրառման հետ կապված ռիսկերը

<u>Ես ընդունում եմ վալպրոատ և հղիացել եմ</u>
Եթե կասկածում եք, որ հղի եք.

Մի՛ ընդհատեք վալպրոատի ընդունումը, քանի որ էպիլեպսիան կամ երկբևեռ խանգարումը կարող են վատթարանալ:

Անհապաղ խորհրդակցե՛ք բուժող բժշկի հետ: Հետրաբար Դուք կարող եք քննարկել տարբերակներ: խ Բժիշկը կարող է խորհուրդ տալ, որ Դուք բուժման այլ եղանակի անցնեք, և բացատրի, թե ինչպես պետք է կատարվի անցումը վալպրոատով բուժումից բուժման նոր եղանակի:

Այն երեխաները, որոնց մայրերը հղիության ժամանակ ընդունել են վալպրոատ, ենթարկվում են բնածին արատների և

- զարգացման և ուսուցման խնդիրների
- զարգացման ավելի բարձր ռիսկի:

Երկու խանգարումներն էլ կարող են լուրջ ազդեցություն ունենալ Ձեր երեխայի կյանքի վրա: Որոշ դեպքերում, անհնար կարող է լինել անցումը այլ բուժման: Լրացուցիչ տեղեկությունների համար դիմե՛ք Ձեր բուժող բժշկին:

Այցելության ընթացքում բուժող բժիշկը կխնդրի կարդալ և ստորագրել ռիսկերի ճանաչման ձևաթուղթը, որը կվկայի այն մասին, որ Դուք լավ տեղեկացված եք և հասկացել եք հղիության ժամանակ վալպրոատ ընդունելու ռիսկերը և խորհուրդները:

Անհրաժեշտ է լինել հսկողության տակ, որպեսզի՝

- հավաստիանանք, որ Ձեր հիվանդությունը վերահսկվում է
- հնարավոր լինի հետևել Ձեր երեխայի զարգացմանը